

Մարմնի մաքրութիւնը պահպանում է մեզ հիւանդութիւններից. ամբողջ կաղմուածքն աւելի ուժեղ է լինում, եթէ կաշին մաքուր է պահուում և նորա պաշտօնակատարութիւնը կանոնաւոր է:

Մազերը. Միայն մի բան մեր մարմնի մէջ ոչ մի դործ չէ կատարում—այդ մազերն են: Ուրազէս զի արհեստական կերպով ստեղծեց մեր մազերին աշխատել, պէտք է օրական դոնէ երկու անգամ խիտ սանրով սանրենք մեր մազերը: Սանրելու շնորհիւ մազերը ոչ միայն մաքրուում են փոշուց ու այլ կեղտից, այլ և աւելի լաւ են տնուում. սանրել ատամները զրգուում են դիտի կաշին, արեւն աւելի առատ է հոսում գէպի մազերի արմատները, որով աւելի սնունդ են ստանում ու արագ աճում:

Սաամնեւրն էլ աւելի լաւ են պահպանում ու չեն փճանում, երբ մաքուր են պահուում և աշխատանք են ստանում: Անհրաժեշտ է առաւօտ—երեկոյ և ամէն բան ուտելուց յետոյ բերանն ողողել մաքուր ջրով և օրը մի անգամ ատամները օրհել վրձինով, օգտակար է վրձինը թրջել սպիւրտէ մէջ: Ատամները դործը ծամելն է. ուստի ատամներին խնայել պէտք չէ, այլ հարկաւոր է յաճախ կոշտ հաց ծամել, որից ատամներն աւելի ամրանում են: Ի հարկ է այստեղ էլ ծայրայեղութիւնը ինչպէս և ամէն բանում, վնասակար է, ով որ սովորութիւն ունի ատամով կորիզ կամ ընկոյզ ջարդելու, պիտի չզարմանայ, եթէ իւր ատամները փշրուում են կամ սկսում են ցաւել:



Ս Ս Ե Ր Լ Ա Տ Ի Ն .

Սկարլատինը վտանգաւոր հիւանդութիւն է. նորանից մեռնում են շատ երեխաներ: Հասակաւոր մարդիկ սակաւ են հիւանդանում սկարլատինով. իսկ ով մի անգամ հիւանդացել է և ազատուել, նա շատ քիչ է պատահում, որ երկրորդ անգամ հիւանդանայ:

Ո՞վ չգիտէ, որ եթէ մի տան մէջ մէկը հիւանդանայ սկարլատինով, սովորաբար շատ շուտ նրանից յետոյ հիւանդանում են նաև ուրիշները: Մի երեխան դեռ չառողջացած, միւսն է հիւանդանում և այսպէս կարող են բոլոր երեխաները հիւանդանալ:

Նաև յաճախ պատահում է, որ երբ մի խրճիթի մէջ լինում են սկարլատինով հիւանդների, քիչ ժամանակից յետոյ նոյն հիւանդութեամբ բռնուում են նաև հարեան և հեռաւոր՝ զիւղի միւս ծայրը դնուած խրճիթների բնակիչները, եթէ նոքա անցնեն մօտից, յարաբերութիւն ունենան այն տան հետ ուր սկարլատին կայ: Այդ բաւական չէ, ուրիշ գիւղից ուր մինչև այդ ժամանակ սկարլատին չի եղել, դալիս են այն տունը, որտեղ հիւանդ կայ, առողջ վերադառնում են տուն, իսկ մի կամ երկու շաբաթ յետոյ նոցա գիւղումն էլ սկսում են մարդիկ սկարլատինով հիւանդանալ:

Սկարլատինը հիւանդից փոխում է առողջի վերայ, խրճիթից խրճիթ է անցնում: գիւղից-գիւղ եւ այդ պատճառով կոչւում է վարակիչ, փոփոխական հիւանդութիւն:

Ինչո՞ւ է արդեօք հիւանդութիւնը հիւանդից առողջին անցնում: Այն պատճառով, որ հիւանդը վարակում է և իրեն շրջապատող օդը, որով նա շնչում է, և այն անկողինը, որի վերայ նա պառկում է, և այն հագուստն ու ամանները, որոնց նա դիպում է:

Հասկանալի է, ուրեմն, որ իւրանքանչիւր դե ով մօտենում է հիւանդին առաւել ևս նա, ով նորա հետ միասին ապրում է, կարող է վարակուել և սկարլատինով հիւանդանալ:

Կարող է սակայն և այսպէս պատահել, որ հիւանդի մօտ եղող մարդն ինքը չի հիւանդանայ սկարլատինով, բայց իւր միջոցաւ հիւանդութիւնը կփոխադրէ ուրիշ տուն և այնտեղ առողջ մարդկանց կվարակի: Վարակուել կարելի է ոչ միայն մարդկանց այլև իւրեղէնների միջոցաւ. հիւանդի անկողնից, նորա հանգերձները: Օրինակ մի երեխայ կհիւանդանայ սկարլատինով—նորա մայրը իւր հարեան կնոջը կծախի կամ կնուիրի երեխայի հագուստը կամ վերմակը և այդ իրերից կհիւանդանան հարեան կնոջ երեխաներն էլ: Այնպէս է լինում, որ վարակումը յառաջ է դալիս ոչ թէ հագուստի, այլ ուտելիքի, օրինակ հացի միջոցաւ. Հարեան մի կին հաց կվերցնի այն տնից, ուր սկարլատինով հիւանդներ կան, իսկ հացի վերայ փոխուած կլինի

հիւանդութիւնը. այսպիսով նա հացի հետ տուն կրելի հիւանդութիւնն էլ. Յատկապէս կաթի միջոցաւ սկարլատինը հեշտութեամբ փոխուում է տնից տուն:

Եթէ մէկը սկարլատինով վարակուի, նա ոչ թէ աստիճանաբար, կամայ կամաց կհիւանդանայ, այլ միանգամից՝ յանկարծ:

Առաւօտեան երեխան առողջ էր. խաղում էր, կամ դպրոց էր գնում իսկ երեկոյան դէմ պառկում է, գանգատուում է, որ գլուխն է ցաւում, որ իրեն վատ է զգում: հրաժարուում է սնունդից և դողայնում է: Դողից յետոյ երեխան սկսում է տաքացնել, քիչ առաջ նա փաթաթուում էր, ծածկուում, իսկ այժմ տաքութիւնից դէն է ձգում վերայից ամեն բան: Երեխան տաքութեան մէջ զառանցում է և անկապ անկապ խօսում:

Սկսում է փսիւել. նախ ստացուած սնունդն է յետ գալիս ապա՝ մաղձ: Հիւանդութեան երկրորդ օրը երեխայի ամբողջ մարմինը կարմրում է, կրակի գոյն է ստանում:

Եթէ մարդ զիտէ այդ ընդհանուր կարմրութիւնը կտեսնէ, որ ամբողջ մարմինը ծածկուած է մանր, մանր կարմրագոյն բշտիկներով: Բշտիկներով ծածկուում է նաև երեւոր, քոյց ոչ ամբողջապէս. քիթն ու շրթութունքները սովորաբար մնում են գունատ: Երեխան զանգատուում է, որ մի բան կրանելիս կոկորդը ցաւում է, եթէ նորան ստիպենք բերանը բանալ, կտեսնենք որ կոկորդը սաստիկ ուռել է և կարմրել:

Գեղձերը դրսից նոյնպէս ուռնում են և ցաւում: Տաքութիւնը և բշտիկները մնում են 4 օր, երբեմն էլ աւելի երկար:

Դորանից յետոյ երեխան սկսում է առողջանալ. տաքութիւնը աստիճանաբար պակասում է, բշտիկներն անյայտանում են և տեղը սպիտակում, կաշին սկսում է թեփի պէս մանր շերտերով դուրս գալ. իսկ մաշնների վերայ և ափի մէջ կաշին աւելի մեծ կտորներով է դուրս գալիս:

Բայց հիւանդութիւնը միշտ այսպէս յաջող չի վերջանում: Յաճախ սկարլատինից մեռնում են հիւանդութեան առաջին օրը,

սաստիկ տաքութեան ժամանակ. երբեմն ծանր և երկար հիւանդանում են սկարլատինից յետոյ էլ, երբ արդէն բշտիկներն անյայտացած են լինում: Այսպիսի դէպքում յաճախ ջրգողութիւն է յառաջ գալիս և երեխայի ամբողջ մարմինը ջրակալում է: Ծառանգամ էլ գեղձերի վերայ ուռոյցքներ են զոյանում: Ուռոյցքներ լինում են նաև ախանջների մէջ. ախանջներից թարախ է ըսկրսում հոսել: Զրգոզութիւնից և ուռոյցքներից երեխան նոյնպէս կարող է մեռնել:

Ուրեմն ի՞նչ պէտք է անել, եթէ ընտանիքի մէջ մէկը սկարլատինով հիւանդացի է: Ամենից լաւն է հիւանդին հիւսնոյնից տանել. այնտեղ նորան և աւելի լաւ կպահեն և բժշկութիւնն աւելի կանոնաւոր կլինի. նա ինքն աւելի հեշտութեամբ կառողջանայ, անեցիք էլ նորանից չեն վարակուի:

Եթէ ոչ մի կերպ հնար չկայ հիւանդանոցում տեղաւորելու, այն ժամանակ պէտք է բժշկին իմաց անել, նա ցոյց կտայ թէ ի՞նչ պէս պէտք է հիւանդին պահել, ի՞նչով պէտք է նորան բժշկել և թէ ի՞նչ պէտք է անեն ընտանիքի միւս անդամները չվարակուելու համար:

Սակայն բժշկի խորհրդից առաջ էլ անհրաժեշտ է հիւանդի վերայ հոգ տանել:

1. Նորա համար պէտք է յարմար անկողին պատրաստել: Լաւ է հիւանդի առկ հանգերձեղէն մուշտակ և ըն չփռել, այլ խոտ կամ յարդ փռել: Այսպէս լաւ է այն պատճառով, որ խոտը կարելի է յետոյ այրել և այսպիսով հեշտութեամբ վարակումից ազատուել. իսկ հանգերձեղէնը հիւանդի վեր կհնալուց յետոյ պէտք է մաքրել. սակայն սկարլատինով վարակուելուց յետոյ մաքրելը շատ զժուար է լինում: Իսկ եթէ, չմաքրենք այդ հագուստները նոցա միջոցաւ կարող է հիւանդութիւնը ուրիշ մարդկանց վերայ անցնել:

2. Տան օդը պէտք է մաքուր և թարմ լինի, որ հիւանդը ազատ շունչ քաշել կարողանայ: Դորա համար հարկաւոր է տան օդը շուտ շուտ մաքրել: Ամառը պատահանները բաց անել. իսկ ձմեռը օդանցքը, որ խեղդիչ, ծանր օդը ծխնելոյղի միջով դուրս ելնէ, կարելի է և դուռը բաց անել. ձմեռը հիւան-

զին լաւ ծածկելուց յետոյ որպէսզի ցուրտը նորա վերայ չազդէ:

Ցունը պէտք է մաքուր պահել կեղտոտ ջրերէ ամէն անգամ անոր շուտով մաքրել: Բոլոր աւելորդ իրերը հազուադէպ ձիւ սարքէն անխնայ պէտք է հանել և ուրիշ անոց դնել: Մաքուր օդը առհասարակ առողջ մարդկանց համար էլ հարկաւոր է: Իսկ հիւանդ թոյլ մարդը առանձին կարիք ունի մաքուր օդի:

3. Հիւանդին իրեն ևս պէտք է մաքուր պահել սկարլատինով հիւանդ երեխային լուսնալուց չպէտք է վախենալ: Առնչակ չպէտք է վախենալ երեխայի սպիտակեղէնը շապիկը փախելուց: Երբ նորա մարմինը բշտկներով է ծածկուած: Մաքուր սպիտակեղէնի մէջ և մաքուր անկողնում հիւանդը իրեն աւելի լինիլ է զգում:

4. Հիւանդի զինն երբ նա տաքութեան մէջ է՝ կարելի է սառը ջրով լերծած և քաւած (որ ջուր չհոսի) երեսօրիչ դնել այդ երեսօրիչը պէտք է շուտ շուտ փոխել որ չաքանայ և միշտ սառը լինի:

5. Փոքր երեխաների բերանը պէտք է յատակ ջրի մէջ լացացրած մաքուր թաշկինակով օրրել: Լաւ կլինի եթէ ջուրը եփած լինի: Իսկ աւելի մեծերին պէտք է սախիլ բերանը և կոկորդը եռացրած ջրով յաճախողովել:

6. Երբ երեխան ջերմութիւն ունի և կերակրից հրաժարուում է, կարիք չկայ նորան սախիլել որ ուտէ: Եթէ նա ուտել է ուզում՝ կարելի է նորան միայն լինիլ և կերակուր տալ: Կաթի կաթնապուր լիւրիւս ձու սպիտակ հաց ծանր կերակուր ինչպէս կողմնորոշ սպաս վարունք, այլ ձուկ և չի պէտք է տալ: Զիւրմութիւն ունեցող երեխան տանջուում է ծարաւութիւնից: Սառը ջուր չպէտք է տալ այլ սառեցրած թէյ կամ եռացրած և յետոյ սառեցրած ջուր պէտք է խմացնել: Թէյի և ջրի մէջ համ տալու համար կարելի է կիտրոն գցել կամ հապալասու (KALORBA) հիւթ խառնել:

Սակայն բաւական չէ հիւանդի վերայ հոգս տանելը և նորան բժշկելը: Հարկաւոր է նաեւ վարակման առաջն առնելու և գիւղի

մէջ տարածուիլը խանգարելու մասին մտածել:

Սորա համար նախ և առաջ պէտք է հիւանդներին առողջներից զատել: Երբ համար ամենից լաւն է, ինչպէս վերելք տալու է հիւանդին հիւանդանոց տանել: Եթէ սկարլատինով հիւանդ ունեցող ընտանիքի մէջ դպրոց գնացող երեխաներ կան՝ պէտք է նոցա տանը պահել և դպրոց չթողնել: Ապա թէ ոչ նոքա դպրոցի երեխաներին էլ կվարակեն: Իրանք անցիկ ուրիշների ճամ չպէտք է երթան և ուրիշներին էլ իրենց մօտ չպէտք է ընդունեն: Երբ հիւանդութիւնը չտարածուի:

Հարեաններ և համագիւղացիները սկարլատինով հիւանդ ունեցող անից ոչ հազուադէպ պիտի առնեն: Երբ է անօթեղէն, ոչ տակեղէն, որ այդ իրեղէններով իրենց անեցող էլ չվարակեն:

Առհասարակ ամէն կերպ պէտք է աշխատել յարաբերութիւն չունենալ այն տան հետ ուր սկարլատին կայ:

Երեխայի առողջանալուց յետոյ պէտք է հոգալ վաշտկումը նորանից: Նորա հազուադէպ անկողնից և ամբողջ անից մաքրելու մասին: Նորա համար պէտք է երեխային սապոնով լուանալ: Մաքուր հանգիւսներ հոգցնել: Նորա տակի խոտը այրել: սպիտակեղէնը վերամկր երեսօրիչը և բոլոր այն հանգիւսները որ երեխան գործ է ածել պէտք է լաւ խաշել և սապոնով լուանալ: Մահճակալը, թախտը, որի վերայ հիւանդը պառկած է, կղել և առհասարակ ամբողջ տունը, յատկաւ և պատերը պէտք է տաք ջրով ու սապոնով կամ մանրաջրով մաքուրից մաքուր լուանալ: Այս դէպքում էլ դարձեալ լաւ է բժշկին գիմել: Նա ցոյց կտայ թէ ինչպէս աւելի լաւ է վարակումից ազատուել:

Եթէ դժբախտութիւն է պատահել և երեխան սկարլատինից մեռել է՝ երբ ք միւս երեխաներին չի կարելի թոյլ տալ որ հանգուցեալի հետ մնաս բարով անեն: Երբ հետեւ մեռածից էլ նոյնապէս հեշտութեամբ կարելի է վարակուել: Երբ և կենդանի մարդուց Չի կարելի նոյնպէս ինչպէս գիւղերում սփռութիւն է հանգուցեալի հանգիւսները:

շապիկները վերմակը և ինչ ուրիշներին նույն-
րեւ, այդ նուէրներին միջոցաւ հետադարձեալ
վարակուում են և ուրիշ ընտանիքներ։ Այս-
պիսի ընծաներ չպէտք է նաև ընդունել։
Պէտք է միշտ միտը բերել որ ինքն իրեն
պահպանին Աստուած էլ կպահպի։*

Բ. Մ.

ՄԱՆՐԱԼՈՒՐԲ

Բուռնի հիւանդոսրիւնը. — Ինչպէս յայտնի է
թանկագին քարերը ենթակայ են բազմաթիւ հի-
ւանդութիւններին, որոնք արտայայտուում են նը-
րանով, որ քարերը կորցնում են իրենց փայլը
կամ աստիճանաբար փոխում են իրենց սկզբնական
գոյնը, երբ երկար ժամանակ ենթարկուում են
արևի ճառագայթների ազդեցութեանը։ Այս փո-
փոխութիւններին ամենից պակաս ենթակայ են
զմրուկաւր, շափիւզան (сапфиръ) և սուտակը (ру-
бинъ), որոնք երկար ժամանակ առանց փոփոխու-
թեան պահպանում են իրենց փայլն ու ցոլքը։
Վաղայն այս վերջիններից էլ սուտակը, թէև քիչ,
բայց այնուամենայնիւ փոխում է իւր գոյնը,
ինչպէս այդ երեւաց Պարիզում կատարուած փոր-
ձերից։ Երկու հասարակ մեծութեամբ սուտակնե-
րից մէկը թողին ի ցոյց ակնավաճառի խանութի
պատուհանում երկու տարի և յետոյ երբ հա-
մեմատեցին նրան երկրորդ սուտակի հետ, որ չէր
ենթարկուել արևի անընդհատ ազդեցութեան և որ
առաջ բոլորովին նոյն գոյնն ուներ ինչ որ ճառաջինը,
երեւաց որ առաջինը նկատելի կերպով գոյնը ձգել
է։ Յատկապէս վնասակար ազդեցութիւն է անում
լոյսը տոպազի և նոնաքարի (гранатъ) վերայ։
Առաջինը գոյնը գցում է իսկ երկրորդը ընդհակա-
ռակը աւելի մութ գոյն է ստանում և երկուսն էլ
կորցնում են իրենց փայլը։

Ակնավաճառները ամենազգայուն քարը օպալն
են համարում։ Սառսիկ զգայնութեամբ յայտնի է
նաև մարգարիտը. նա յաճախ իւր փայլը կորցնում
է, եթէ յղկելու միջոցին վարպետի ձեռքից քրտին-
քի մի կաթիլ ընկնում է վերան։ Մարգարտի վե-
րայ վատ է ազդում նաև կրակի մերձաւորութիւնը։
Ամենամուր և թանկագին քարերից մէկն է ալ-
մասը բայց նա ևս տաքութեան վերաբերմամբ շատ

զգայուն է։ Կրակի ազդեցութիւնից նա կարող է
ծաքել։

Սառսիկ փոփոխականութեամբ աչքի է ընկ-
նում նաև փրուզան, որի նուրբ-վարդագոյն փայլը
փչանում է յաճախ և քարը ծածկուում է բնե-
րով։ Նորից մաքրելու համար շատ անգամ փրուզ-
ան մի քանի շաբաթով թաղում են սևահողի
մէջ. իսկ միջին Ասիայի և Վովկասի բնակիչները
քարի գոյնը վերականգնելու համար հնգուհաւերին
կլանել են տալիս և այնուհետև գտնում։

— Օգոստոսի 16-ին ընկած օգաքարը այժմ զբո-
նուում է Ս. Ալադիմիրի համալսարանի մի ուսանողի
մօտ, որ պէտք է հասցնէ Կիև։ Նա խնայպէս փը-
շքրուած օգաքարի մի կտոր է։ Գտնուել է Չենի-
գովինան Լեօնովկա գիւղի մօտերը մի գիւղացու
միջոցով։ Աւերջինս քիչ էր մնացել մահանար ըն-
կած օգաքարից, բայց խնկացի գիւղացին, չնայելով
որ բոլորովին չէմէլ էր, մի փայտի կտոր է տնկում
ընկած տեղը, որով և հետեւեալ օրը գտնում է
օգաքարը փոքր ինչ խորութեան մէջ։ Օգաքարը
գորշագոյն օրձաքարիտի մի առանձին տեսակ է։

Լեօնովկա գիւղից 5 վ. հեռաւորութեամբ
գտնուել է և նոյն օգաքարի մի աւելի փոքր կտորը։

Chronique Medicale շատ հետաքրքրական տե-
ղեկութիւն է տալիս Գուստաւ Լը-Բօնի (Le Bon)
Սաղի-Կարնոյին ընծայած Հնդկական մի փոքրիկ
արձանիկի մասին։

Կարնօն գիւղ ևս եղեմտից նախարար էր և
չէր էլ մտածում նախագահութեան համար, երբ
Լը-Բօն վերադառնալով Հնդկաստանից՝ նորան ըն-
ծայ բերեց մի հիանալի արձանիկ։

Այս արձանիկի մասին մի աւանդութիւն
կայ, ասաց Le-Bon իր բարեկամին. — Նա դարերով
Կաթուրան հարստութեան սեփականութիւն է եղել։
Ինձ ընծայող բաջան անյատճառ կամենում էր ա-
ղատուել նորանից։ Նա խորհրդաւոր զօրութիւն
ուէր. իւր տան անգամներից մէկը, որին էր պատ-
կանում արձանիկը, հասնում է երկրի բարձրագոյն
իշխանութեան, բայց շուտով անբնական մահուամբ
վախճանում է, ուստի ինձ ընծայող բաջան թէև
շատ էր կամենում իւր երկիրը կառավարել, բայց
չէր ցանկանում սպանուել, ուստի և իւր շարա-
գուշակ արձանիկից մի կերպ կամենալով ազատուել
ընծայեց ինձ՝ նախապէս պատմելով նորա հետ կա-
պուած աւանդութիւնը։ Արձանիկի արտակարգ գե-
ղեցկութիւնը և տարօրինակ համալը գրաւեցին
ինձ և ևս բերեցի հետս։

Առէք. — աւելացրեց Le-Bon — եթէ երկիւղ
չունիք ոչ փառքից և ոչ տարօրինակ մահուանից։

Սաղի-Կարնօն, որ սիրահար էր ամէն տար-
րինակ և գեղեցիկ իրերի, ուրախութեամբ ընդունեց
այդ ինքնուրոյն ընծան։

* Քարգմ. Издание Комиссiи по разсмотрѣ-
нiю матеріальныхъ знанiй въ народѣ. Изд. 3-е
(Եղովրդի միջ առողջապահական գիտելիքներ տարածող
յանմանադրոյի Գ. հրատ.)